Մակինսկի—խանը։ Երբ Վեհափառ Կաթուղիկոսը մօտեցաւ դրան շէմքին՝ առաջ եկաւ Նահանգապետը և Խաչը համբուրեց. Վեհափառը խաչակնքեց ժողովրդեան և մտաւ դահլիճը, ուր ներկայացան Նորան բոլոր պաշտօնատար անձինք։

Վեհափառ տէրը կարճատեւ խօսակցելուց յետոյ Նահանգապետի հետ, մտաւ իր համար պատրաստած առանձնասենեակը. իսկ Նահանգապետն ու Նորան շրջապատող մարդիկ ցրուեցան իրենց տեղերը։

Սեպտեմբերի 13ին առաւօտեան՝ սկսուեցան Վեհափառի Երեւանից դուրս գալու պատրաստութիւնները. 8 ժամին Ս. Սարգիս եկեղեցւոյ զանգակների հնչիւնը ծանոյց ժողովրդեանը Վեհի դուրս գալը։ Երեւանի Հայ ժողովուրդը չնայելով առաւօտեան վաղ ուղեւորութեան, գլխաբաց յարգանքով սպասում էր Վեհափառի Առաջնորդարանից դուրս գալուն. ռուս զաղախներ, թուրք չափարներ, հայ ձիաւորներ, և շատ կառքեր փակել էին եկեղեցւոյ պարիսպը. ժողովուրդը վրայ էր թափվում Վեհափառի աջը համբուրելու, որը գնում էր եկեղեցի, որտեղից կարճատեւ աղօթքից յետ՝ Վեհափառը դուրս գալով նստեց կառք և սկսուեց ուղեգնացութիւնը։ Կառքերը դանդաղ էին առաջ գնում։ Հայ եկեղեցիների զանգերը զօղանջում էին քաղցր հնչիւնով. Երեւանի բնակիչները առանց ազգութեան խտրութեան հետեւում էին գընացքին։ Վաճառանոցի հրապարակով անցնելու միջոցին՝ Վեհափառին մօտեցաւ Երեւանի Նահանգապետը, որ Մակինսկի Խանի հետ սպասում էր Նորան. Վեհափառը հրամայեց կառքը կանգնեցնել, հրաժարական ողջոյն տուաւ գեներալ Շալիկովին, և ծանր քայլով շարունակուեց գնացքը Աստաֆեվսկի փողոցով։ Այս երկար փողոցի ծայրին, Վեհափառը խաչակնքելով ժողովրդեան՝ օրհնեց նոցա և արձակեց իւր բարեպաշտ հօտը։ Բարձրանալով Երեւանայ դար ի վեր առապարը՝ հասան Բանաքեռ, ուր Վեհափառը կառքը կանգնեցրեց և իջնելով կառքից համբուրեց հոգեւորականութեան մատուցած Խաչն ու Աւետարանը։ Տեղական և շրջակայ գիւղերի Հայ բնակիչները մատուցին Վեհափառին աղ ու հաց։ Այնուհետեւ ճանապարհին մեծ ու փոքր ուղեւորում էին Վեհափառին մինչեւ Էլարի իջեւանը, ուր աղ ու հաց ըն-